ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2018-2019 ուստարի

2018-2019 ուստարում ԱԲՀ-ի ուսանողական խորհուրդը, համաձայն աշխատանքային պլանի, կազմակերպել և իրականացրել է մի շարք միջոցառումներ:

24.09.2018թ. կայացավ համալսարանի ՈՒԽ նախագահի ընտրություն և նախագահ վերընտրվեց ստոմատոլոգիական ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող Ստանիսլավ Կարապետյանը:

01.03.2019-թ. Ուսխորհրդի նախագահ Ստանիսլավ Կարապետյանի՝ նախագահի պարտականությունները դադարեցնելու դիմումի հետ կապված, տեղի ունեցավ Ուսխորհրդի նոր նախագահի ընտրություն, որի արդյունքում ուսխորհրդի նախագահ ընտրվեց ստոմատոլոգիական ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող Հ.Կուլիջանյանը: Ուսխորհրդի կազմում ընդգրկվեցին 12 ուսանող:

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Ուսումնական տարեսկզբին, Գիտելիքի, Դպրության օրվա, ուսումնական տարվա մեկնարկի հետ կապված, հանդիսավոր հանդիպում է տեղի ունեցել բոլոր կուրսերի ուսանողների հետ:
- Դեկանատի հետ միասին կազմակերպվել են խորհրդակցություններ բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետների առաջին կուրսի ուսանողների հետ, որի նպատակն է եղել ուսանողներին ծանոթացնել ինչպես ուսանողական խորհրդի գործունեությանը, այնպես էլ համալսարանի պատմությանը, համալսարանում գործող՝ մասնավորապես ուսանողներին վերաբերող մի շարք կանոնակարգերի հետ:
- ԱԲՀ ՈՒԽ-ն հոկտեմբերի 5-ին ուսուցչի և ամբողջ կրթական ոլորտում աշխատողների մասնագիտական տոնի առթիվ շնորհավորել է ԱԲՀ-ի դասախոսական ողջ կազմին, մաղթել արգասաբեր աշխատանք և նորանոր հաջողություններ՝ երիտասարդ սերնդին կրթելու մեծ և պատասխանատու գործում: Այդ կապակցությամբ պատրաստվել է փոքրիկ միջոցառում և նվիրվել դասախոսներին, ուսումնաօժանդակ անձնակազմին ծաղիկներ:
- Սեպտեմբերի 22-ին և 29-ին Հայաստանի ուսանողական մարզական ֆեդերացիայի կողմից կազմակերպվեց սպորտային միջոցառում նվիրված՝ ՀՀ անկախության տոնին նվիրված համալսարանական սպորտի միջազգային օրվան: Սպորտային մրցաշարն

իր մեջ ներառում էր՝ կոռսավազք, պարանի ձգում և Հայաստանի սպորտի պատմության մեջ առաջին անգամ անցկացվող Դրագոն Բոութ (Dragon Boat) մրցումները: Մրցաշարին մասնակցում էին 15 բուհերից ավելի քան 300 ուսանողներ: Ավանդական բժշկության համալսարանից մասնակցել են ՈՒԽ նախագահ Ս. Կարապետյանը, ՈՒԽ փոխնախագահ Ս. Կարախանյանը, Ա. Վարդանյանը:

«Ոչ պետական բուհերի ուսանողական կենտրոն» հասարակական կազմակերպությունը հանդես գալով միասնական թիմով զբաղեցրեց 2-րդ պատվավոր հորիզոնականը պարանի ձգում և Դրագոն Բոութ (Dragon Boat) մրցումներում:

- 2019թ.-ի հունիսի 9-ին ամփոփվել է «Միջբուհական մարզական խաղեր 2019 ծրագիրը: Մեկ ամիս շարունակ՝ ապրիլ-մայիս ամիսներին, ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների և օտարերկրյա բուհերի հայաստանյան մասնաճյուղերի ուսանողներն ուժերը չափել են 5 մարզաձևից՝ սեղանի թենիս, բազկամարտ, շախմատ, վոլեյբոլ և ֆուտզալ:
  - ✓ 2019թ. ապրիլի 20-ին Սեղանի թենիսի մարզաձևի մրցումներին մասնակցել են բուժական ֆակուլտետի 1-ին կուրսի ուսանողներ Մունտադհեր Սաֆաալդին Նասերը, Աբդուլլահ Հուսամ Ջամելը, Բհավեշ Կումար Սիշայեն, Մոհամմեդ Աբդուլսատտար Օթիման Ալ-Ջանաբին:
  - ✓ 2019թ-ի մայիսի 6-ին մեկնարկեց Ֆուտզալի միջբուհական առաջնություն, մասնակցել են 14 բուհի մոտ 200 ուսանող, որոնց թվում և մեր համալսարանի ուսանողները՝ բուժական ֆակուլտետի առաջին կուրսի ուսանողներ Աբդուլլահ Հուսսամ Ջամելը, Բհավեշ Կումար Սիշայեն, Մոհամմեդ Աբդուլսատտար Օթիման Ալ-Ջանաբին, Մուստաֆա Իմադ Սաադալլահը, Կարվան Համզա Հասսանը, Մունտադհեր Սաֆաալդին Նասերը, ստոմատոլոգիական ֆակուլտետի՝ 4-րդ կուրսի ուսանողներ Թամազյան Տիգրանը, Բաղդասարյան Ալբերտը, Դավթյան Դավիթը, մագիստրատուրա առաջին կուրսի Կուլիջանյան Հայկը, և բուժական ֆակուլտետի երրորդ կուրսի ուսանող Դանա Լուքման Կլը:

Մեր համալսարանի ուսանողներից կազմված թիմը ունեցավ խաղեր առաջինը՝ ՀԱՀ-ի ուսանողների թիմի հետ մայիսի 6-ին ժամը 14:00-ին, երկրորդը՝

մայիսի 7-ին ժամը 14:00 –ին ԵՊԿ թիմի հետ,և մայիսի 13-ին ժամը 14:00-ին ՀՌՀ-ի հետ:

- 2018 թ. հոկտեմբերի 20-ին Ավանդական բժշկության համալսարանի ուսանողների շրջանում համալսարանի ուսխորհրդի և «Քամփս ինտերնեյշնլ կենտրոնի» կողմից կազմակերպվեց «Մերձեցման երեկո», որին մասնակցում էին համալսարանի ղեկավարությունն ու աշխատակիցները, «Քամփս ինտերնեյշնլ կենտրոնի» աշխատակիցները և ՀՀ-ում Հնդկաստանի փոխդեսպանը, դեսպանատան ներկայացուցիչները, ինչպես նաև համալսարանում սովորող տարբեր ազգությունների ուսանողներ: Երեկույթի ընթացքում տարբեր ազգերի ուսանողներ ներկայացրեցին իրենց ազգային երգն ու պարը, մշակույթը:Հանդիսությունը կրկնակի արժևորվեց նաև մեկ այլ գեղեցիկ արարողակարգով. համալսարանի բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետների 5 ուսանողներ 2017-18 ուս.տարում ցուցաբերած բարձր առաջադիմության համար արժանացան «Լավագույն ուսանող» մրցանակի / Հայկ Կուլիջանյան՝ ստոմ.ֆակ. մագիստրատուրա 1-ին կուրս, Ֆատեմեհ Դուստդարարաբի՝ ստոմ.ֆակ.2-րդ կուրս, Շեբա Մարի Ռոյմոն՝ բուժ.ֆակ.2-րդ կուրս, Շադ Շվան Աբդալլա Աբդալլա՝ բուժ. ֆակ.3-րդ կուրս, Ադվաիթի Ուտտուվալլի Շաջի՝ բուժ.ֆակ 4-րդ կուրս/:

ԱԲՀ-ի ռեկտոր Ն. Սարիբեկյանը շնորհավորելով մրցանակակիրներին՝ մաղթեց նորանոր հաջողություններ ուսման մեջ և հանձնեց մրցանակները:

- Հոկտեմբերի 31-ին և նոյեմբերի 1-ին Ավանդական բժշկության համալսարանում ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ և Երևանի Ավանի շախմատի մարզադպրոցի աջակցությամբ անցկացվեց ներբուհական շախմատի մրցաշար: Կազմակերված մրցաշարին մասնակցում էին համալսարանի հայ և օտարազգի մի շարք ուսանողներ: Շախմատի առաջնության կազմակերպումը մի քանի նպատակ է հետապնդում՝ համախմբել ու մտերմացնել ուսանողներին, նրանց առօրյան դարձնել է՛լ ավելի բովանդակալից, զարգացնել ուսանողների տրամաբանությունը, և, վերջապես, այն լավագույն առիթ է շնորհալի ուսանողներին բացահայտելու համար:

Մրցաշարն անցկացվեց միջազգային չափորոշիչներին համապատասխան. մրցակիցներն ընտրվում էին համակարգչային հատուկ ծրագրով (www.chess-

results.com), որին աշխարհի տարբեր անկյուններից կարող էին հետևել ուսանողների ծնողներն ու հարազատները:

Համառ պայքարում համալսարանի լավագույն շախմատիստներ ճանաչվեցին՝

- 1-ին տեղ՝ Մուստաֆա Իմադ Սաադալլահ Ալ-Խալիդի /Ստոմատոլոգիայի ֆակուլտետ, 1-ին կուրս/,
- 2-րդ տեղ՝ Մոհամմեդ Յասին Մահմուդ Մահմուդը /Բուժական ֆակուլտետ, 3-րդ կուրս/,
- 3-րդ տեղ՝ Հայկ Կուլիջանյանը /Ստոմատոլոգիական ֆակուլտետ, մագիստրատուրա 1-ին կուրս/:

➢ Մարտի 10-ին UBG International Recruitment in Eastern Europe and China» գերմանական ընկերության ներկայացուցիչները այցելեցին Ավանդական բժշկության համալսարան՝ ստեղծելու համագործակցության հիմքեր կրթության ոլորտում: Մեր հյուրերը, Քլեյնբորգադ Լուիսան, Մարինա Սիսկովան եւ Ավթրիդ Վանհոֆը ծանոթացան ԱԲՀ-ում գործող կրթական համակարգի և նրա առանձնահատկությունների հետ, հարցազրույց ունեցան ուսանողներ հետ եւ ղեկավարության հետ քննարկեցին համագործակցության հիմնական դրույթները: Այս համագործակցությունը ԱԲՀ շրջանավարտներին հնարավորություն կտա վերապատրաստում անցնել Գերմանիայում և զարգացնել իրենց մասնագիտական հմտությունները և կարողությունները:

➢ Ապրիլի 18-19-ը համալսարանի ուսխորհուրդը առաջին կուրսի ուսանողների համար կազմակերպեց էքսկուրսիա դեպի Նոյ Կոնյակի և Գինու գործարան: Այն տեղի ունեցավ երկու փուլով՝ առաջին օրը գնացին առաջին կուրսի երկու խումբ, իսկ հաջորդ օրը՝ մյուս երեք խմբերը:

➢ 25.04.2019թ. համալսարանի ղեկավարության, ուսխորհրդի և ուսանողների այց Մեծ Եղեռնի հուշահամալիր:

➢ Ուսանողների առաջարկով համալսարանի ուսխորհուրդը ս/թ մայիսի 15-ին կազմակերպեց Օրթոպեդիկ ստոմատոլոգիայից գործնական հմտությունների ցուցադրման բաց դաս համալսարանի ստոմատոլոգիական ֆակուլտետի բարձր կուրսերում, որը վարեց «Ստոմատոլոգիայի» ամբիոնի վարիչ, առաջնակարգ փորձառու օրթոպեդ, դոկտոր-պրոֆեսոր Վ. Կիրակոսյանը:

➢ Մասնակցություն 2019թ. մայիսի 14-ին ԱԲՀ-ում կայացած §Է.Մ.Մինասյանի անվան Ավանդական բժշկության! ամբիոնի վարիչ բ.գ.թ, Է.Մ.Մինասյանի

«Օրգանիզմի էներգոինֆորմացիոն համակարգի ախտորոշում» ուսումնական ձեռնարկի շնորհանդեսին:

- 2019թ-ի մայիսի 15-16-ը անց են կացվել գիտաուսումնական սեմինար ԱԲՀ-ի բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետների լավագույն ուսանողների մասնակցությամբ: Ավարտին երկու ֆակուլտետներից զեկույցներով հանդես եկած ուսանողները ստացան մասնակցության սերտիֆիկատներ:
- 2019թ. մայիսի 24-ին Համալսարանը հյուրընկալեց Իրանի հյուպատոս Մոխթար Շահ Հոսեինիին: Այցի նպատակն էր՝ ծանոթանալու համալսարանի հետ, նրա առաքելությանը, համալսարանի պայմաններին, կրթական միջավայրին: Հարգարժան հյուպատոսը այդ ամենի շրջանակներում առանձին հանդիպում ունեցավ համալսարանի ղեկավարության հետ, ապա առանձին կազմակերպվեց հյուպատոսի հանդիպումը համալսարանում սովորող իրանցի ուսանողների հետ, որոնց հետ մոտ մեկ ժամ տևած զրույցն ընթացավ բաց, անկաշկանդ մթնոլորտում:
- 2019թ-ի մայիսի 24-ին «Հումանիտար առարկաների» ամբիոնի՝ ի դեմս վաստակաշատ, փորձառու դասախոս Ամալյա Գրիգորյանի և Տաթև Խաչատրյանի, ինչպես նաև ուսխորհրդի մասնակցությամբ կազմակերպվել էր «Սիրում եմ քեզ, հայոց լեզու» կարգախոսով միջոցառումը: Այն սկսվեց Հովհ. Շիրազի «Հայոց լեզու» բանաստեղծության՝ հնդիկ ուսանողուհու ասմունքով: Այնուհետև մեկը մյուսի ետևից, համալսարանում սովորող տարբեր ազգերի ուսանողները գեղեցիկ հայերենով արտասանեցին, երգեցին հայկական հայրենասիրական երգեր: Դահլիճում թնածում էր հայոց լեզուն: Սնակի, Շիրազի, Տերյանի, Թումանյանի, Չարենցի իմաստալից տողերը շոյում էին ունկնդրի ականջը: Յուրահատուկ ձևով խնկարկվեցին հայազգի մեծ երախտավորներ Կոմիտասի, Թումանյանի ծննդյան 150-ամյակները:
- Մասնակցություն ՈԱԲ-ի կողմից կազմակերպած «Ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության» զեկույցին, որը կայացավ 2019թ մարտի 4-ին, ներկա էր նաև Ուս. Խորհուրդը, որի ընթացքում ներկայացվեց Ինքնավերլուծության 10 չափանիշները:
- Տարվա ընթացքում դեկանի, կուրսի խորհրդատուների հետ մասնակցություն ցածր առաջադիմություն ունեցող, հաճախ բացակայող ուսանողների հետ կազմակերպված անհատական և խմբային զրույցներին, հանդիպումներին:

- Մասնակցություն քննաշրջանին նախապատրաստվելու, քննաշրջանի արդյունքների ամփոփման հետ կապված խորհրդակցություններին:
- 2019թ. մարտի 18-ին և մայիսի 18-ին տեղին են ունեցել շաբաթօրյակներ, որոնց ակտիվ մասնակցություն են ունեցել համալսարանի բոլոր ուսանողները:
- Ուսխորհուրդը համալսարանի բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետների I-IV կուրսի ուսանողների և մագիստրատուրայի սպասվող շրջանավարտների շրջանում մասնակցել է կրթության որակի բարելավման նպատակով անցկացված հետևյալ հարցաթերթիկային հարցումների կազմակերպմանն ու վերլուծությանը՝
  - ✓ «Ուսանողի կողմից պրոֆեսորադասախոսական անձնակազմի գնահատման»,
  - ✓ «Ուսանողների գնահատման վերաբերյալ ուսանողների հարցման»
  - ✓ «Դասընթացի արդյունավետության որակական ցուցանիշների գնահատում»
- Մասնակցություն գիտխորհրդի նիստերին:

ՈՒԽ նախագահ *Հ. ԿՈՒԼԻՋԱՆՅԱՆ*